# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ա-6

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «24» հունվարի 2020թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ Ակադեմիա), որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ»** ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն **Արտակ Հենրիկի Մկրտչյանի** (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում»** ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 262 549 100 **(երկու հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունինը հազար հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

**2.1 Ակադեմիան իրավունք ունի՝**

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

**2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

**2.3 Ակադեմիան պարտավոր է՝**

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

**2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 262 549 100 (երկու հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունինը հազար հարյուր) ՀՀ դրամ:

## 4 Մոնիթորինգ

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է Ակադեմիայի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

## 5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Ակադեմիան սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԱԿԱԴԵՄԻԱ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24 | ք. Երևան, Հր. Ներսիսյան 25 |
| Հ/հ 900011024115 | Հ/հ 900018005505 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| | ՀՎՀՀ 00008791 |

ՀՀ ԳԱԱ նախագահ՝ ____________
(ստորագրություն)

Ռադիկ Մարտիրոսյան

Կ. Տ.

Տնօրեն՝ ____________
(ստորագրություն)

Արտակ Մկրտչյան

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ ____________ (Արտակ Մկրտչյան)
(ստորագրություն)

Հավելված 1
«24» 01 2020 թ.
N Ա-6 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Արտակ Մկրտչյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «24» հունվարի 2020 թ. N Ա-6 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ 262 549 100 (երկու հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունինը հազար հարյուր) ՀՀ դրամ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

| ԱԿԱԴԵՄԻԱ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| Նախագահ՝ ____________ (ստորագրություն) | Տնօրեն՝ ____________ (ստորագրություն) |
| Ռադիկ Մարտիրոսյան | Արտակ Մկրտչյան |

Հավելված 2
«24» 01 2020 թ.
N Ն-6 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
«ԳԻՏԱԿԱՆ և ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ և ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝**

   Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. **Աշխատանքի նպատակը.**

   - Կատարել հիմնարար հետազոտություններ կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, ցածր ջերմաստիճանային պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության, այլընտրանքային էներգետիկայի և գիտատար սարքաշինության բնագավառներում:
   - Ստացված հիմնարար հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարել գիտատեխնիկական մշակումներ և ստեղծել համապատասխան գիտատար սարքերի լաբորատոր նմուշներ: Կատարել մշակված ու ստեղծված սարքերի համար շուկայի մանիտորինգ ու հնարավոր ներդրումային դաշտի ուսումնասիրում:
   - Պահպանել և ընդլայնել ինստիտուտում ձևավորված գիտական դպրոցը և առկա գիտական ներուժը, համալրելով գիտական հետազոտությունների մեջ ընդգրկված երիտասարդ մասնագետներով:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները.**

   Արդյունքների հավաստիություն, նորույթ, խնդրի դրվածքի արդիականություն, հրատապություն, կիրառության հնարավորություն գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում, համաշխարհային գիտության մեջ ինստիտուտին կանոնադրությամբ ամրագրված գիտական ուղղություններով իրականացվող հետազոտությունների ուրույն տեղի ամրապնդում ու ընդլայնում:

4. **Աշխատանքի բովանդակությունը.**

   Ընթացիկ ծրագիրը հանդիսանում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 2016-2020 թթ. ժամանակահատվածում իրականացվող գիտական ծրագրի հերթական փուլ և նախատեսվում է իրականացնել համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ ըստ հաստատված ծրագրի: Նախատեսվում է շարունակել և ընդլայնել ուսումնասիրությունները հետևյալ ուղղություններով՝

   - Մյոսբաուէրյան ու մոդուլացիոն մյոսբաուէրյան սպեկտրասկոպիաներ,
   - Ռենտգենյան, սինքրոտրոնային, գամմա և նեյտրոնային սպեկտրասկոպիաներ,

- Կարգավորված միջավայրերում ռելյատիվիստիկ լիցքավորված մասնիկների կանալացման երևույթի և պարամետրիկ ռենտգենյան ճառագայթման ուսումնասիրությունը արտաքին դաշտերի առկայության պայմաններում,
- Կարգավորված և ամորֆ միջավայրերում ռելյատիվիստիկ լիցքավորված մասնիկների Ղարիբյանի, անցումային և արգելակային կոհերենտ ճառագայթման ուսումնասիրությունը արտաքին դաշտերի առկայության պայմաններում,
- Տարբեր հետագծերով շարժվող ռելյատիվիստիկ լիցքավորված մասնիկների ճառագայթումը գլանային ու սֆերիկ համաչափությամբ օժտված միջավայրերում,
- Մակերևույթային ակուստիկ ալիքների միջոցով վակուումից առաքված քվանտային ճառագայթման հետազոտում,
- Արտաքին ակուստիկ դաշտերի առկայության պայմաններում սառը պլազմայում տեղի ունեցող փուլային անցումների ուսումնասիրում,
- Էլեկտրամագնիսական և ակուստիկական ալիքների տարածումը տարբեր տիպի անհամասեռություններ պարունակող միջավայրերում ու նրանց հետ փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող երևույթների ուսումնասիրում,
- Նյութագիտություն,
- Գիտատար սարքաշինություն:

Ընդլայնել ինստիտուտում հիմնադրված նոր գիտական ուղղության՝ ակուստաֆիզիկայի կիրառման ոլորտներում գիտատեխնիկական հետազոտությունները հետևյալ բնագավառներում՝

- Ֆիզիկական բժշկություն,
- Սեյսմոլոգիա,
- Միջավայրի ճառագայթային մոնիտորինգ,
- Այլընտրանքային էներգետիկա,
- Գյուղատնտեսություն:

Կազմակերպության տնօրեն՝ ______________________ (Արտակ Մկրտչյան)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ ______________________ (Արտակ Մկրտչյան)
(ստորագրություն)

Հավելված 3
«24» 01 2020 թ.
N Հ-6 պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *
## «ԳԻՏԱԿԱՆ և ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ և ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ

| հ/հ | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Համառոտ բովանդակությունը | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները | կատարման ժամկետները | պահանջվող գումարը՝ առանց ԱԱՀ (հազար դրամ) |
| 1. | **Հիմնարար հետազոտություններ** | | | | | |
| 1.1 | Փորձարարական ու տեսական հետազոտություններ | Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում | Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հաշվարկներ | Հոդվածներ, այլ հրապարակումներ ու հաշվետվություններ | 01.01.2020-31.03.2020 | 45,896.90 |
| 1.2 | Փորձարարական ու տեսական հետազոտություններ | Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում | Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հաշվարկներ | Հոդվածներ, այլ հրապարակումներ ու հաշվետվություններ | 01.04.2020-30.06.2020 | 59,450.20 |
| 1.3 | Փորձարարական ու տեսական հետազոտություններ | Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում | Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հաշվարկներ | Հոդվածներ, այլ հրապարակումներ ու հաշվետվություններ | 01.07.2020-30.09.2020 | 61,337.30 |
| 1.4 | Փորձարարական ու տեսական հետազոտություններ | Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական | Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական | Հոդվածներ, այլ հրապարակումներ ու տարեկան | 01.10.2020-31.12.2020 | 75,664.70 |

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում | հաշվարկներ | հաշվետվություն | | |
| 2. | Հետազոտություններ գիտատար սարքաշինության բնագավառում | | | | | |
| 2.1 | Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում | Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով | Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում | Հոդվածներ, արտոնագրեր, սարքերի լաբորատոր նմուշներ | 01.01.2020-31.03.2020 | 3000 |
| 2.2 | Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում | Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով | Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում | Հոդվածներ, արտոնագրեր, սարքերի լաբորատոր նմուշներ | 01.04.2020-30.06.2020 | 3000 |
| 2.3 | Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում | Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով | Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում | Հոդվածներ, արտոնագրեր, սարքերի լաբորատոր նմուշներ | 01.07.2020-30.09.2020 | 3000 |
| 2.4 | Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում | Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով | Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում | Հոդվածներ, արտոնագրեր, սարքերի լաբորատոր նմուշներ ու տարեկան հաշվետվություն | 01.10.2020-31.12.2020 | 3000 |

| 3. | Միջոցառումների կազմակերպում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3.1 | Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում (Ակադեմիկոս Ա.Ռ. Մկրտչյանի անվան գիտական դպրոց) | Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյուքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները | Թեզիսների պատրաստում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ | Սեմինարներ, գիտաժողովներ, թեզիսներ և այլ հրապարակումներ | 01.01.2020-31.03.2020 | 3,612.90 |
| 3.2 | Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում (Ինստիտուտի 40 ամյակին նվիրված գիտաժողովի կազմակերպում) | Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյուքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները | Թեզիսների պատրաստում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ | Սեմինարներ, գիտաժողովներ, թեզիսներ և այլ հրապարակումներ | 01.04.2020-30.06.2020 | 3,187.10 |
| 3.3 | Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում, | Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյուքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները | Թեզիսների պատրաստում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ | Սեմինարներ, գիտաժողովներ, թեզիսներ և այլ հրապարակումներ | 01.07.2020-30.09.2020 | 1,300.00 |
| 3.4 | Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների | Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյուքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու | Թեզիսների պատրաստում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ | Սեմինարներ, գիտաժողովներ, թեզիսներ ու տարեկան հաշվետվություն | 01.10.2020-31.12.2020 | 100.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կազմակերպում, | նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները | | | | |
| | | | | | | |
| Ընդամենը | | | | | | 262,549.1 |

Կազմակերպության տնօրեն` __________________ (Արտակ Մկրտչյան)

*(ստորագրություն)*

Ծրագրի գիտական ղեկավար` __________________ (Արտակ Մկրտչյան)

*(ստորագրություն)*

Հավելված 4
«24» 01 2020 թ.
N Ա-6 պայմանագրի

# ՆԱԽԱՀԱՇԻՎ
## «ԳԻՏԱԿԱՆ և ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ և ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ

*հազար դրամ*

| Հ/հ | Հոդվածի անվանումը | Ֆինանսավորման ծավալը | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ (20%) | 2-րդ եռամսյակ (25%) | 3-րդ եռամսյակ (25%) | 4-րդ եռամսյակ (30%) |
| 1 | աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը | 221100,0 | 37,100.00 | 55,200.00 | 56,657.10 | 72,142.90 |
| 2 | տնտեսական և այլ ծախսեր* | 41449,1 | 15,409.80 | 10,437.30 | 8,980.20 | 6,621.80 |
| Ընդամենը (առանց ԱԱՀ) | | 262549,1 | 52,509.80 | 65,637.30 | 65,637.30 | 78,764.70 |

Կազմակերպության տնօրեն՝ ____________ (Արտակ Մկրտչյան)
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ ____________ (Արմեն Մարտիրոսյան)
(ստորագրություն)

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված 4.1
«24» 01 2020 թ.
N Ա-6 պայմանագրի

# ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ *

| Հ/հ | Ծախսերի անվանումը | Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ) |
|---|---|---|
| 1 | Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝ | 12,426.0 |
| | *էլեկտրաէներգիայի ծառայություն* | *4,045.0* |
| | *գազի ծառայություն* | *4,347.0* |
| | *ջրամատակարարման ծառայություն* | *690* |
| | *կապի ծառայություն* | *2,660.0* |
| | *աղբահանություն* | *684.0* |
| 2 | Գույք | 0 |
| 3 | Սարքեր և սարքավորումներ | 1,610.0 |
| 4 | Նյութեր | 7,765.0 |
| 5 | Գործուղումներ (արտաքին) | 5,700.0 |
| 6 | Գիտական միջոցառումների կազմակերպում | 2,100.0 |
| 7 | Արշավախմբեր (ներքին գործուղումներ) | 10,080.0 |
| 8 | Հրատարակման ծախսեր | 629.0 |
| 9 | Պարտադիր վճարներ | 461.1 |
| 10 | Այլ ծախսեր | 678.0 |
| Ընդամենը | | **41,449.1** |

Կազմակերպության տնօրեն՝ ________________ (Արտակ Մկրտչյան)
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ ՝ ________________ (Արմեն Մարտիրոսյան)
(ստորագրություն)

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«24» 01 20.. թ.
N Ռ-6 պայմանագրի

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

□_______________________□ ծրագրի

*(ծրագրի անվանումը)*

| Հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | Պաշտոն | Գիտական աստիճան | Ամսականաշխատավարձ՝ ներառյալեկամտային հարկը (հազարդրամ) |
|---|---|---|---|---|
| 1. | Մկրտչյան Արտակ Հենրիկի | տնօրեն | ֆ.մ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ.անդ | 250,000 |
| 2. | Աթանեսյան Արմեն Կիսլանջի | փոխտնօրեն Գ/Գ, լաբորատորիայի վարիչ | ֆ.մ.գ.թ. | 205,000 |
| 3. | Դովլաթյան Տիգրան Գագիկի | փոխտնօրեն Ը/Հ | | 160,000 |
| 4. | Մխիթարյան Սամվել Աղասու | գլխավոր ճարտարագետ | տեխ.գ.թ. | 160,000 |
| 5. | Գրիգորյան Գրիգոր Գարեգինի | տնօրենի խորհրդական անվտանգության գծով | | 100,000 |
| 6. | Խաչատրյան Հրանտ Ֆրունզիկի | գիտքարտուղար, ավագ գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 170,000 |
| 7. | Մնացականյան Արմինե Ռուբենի | կադրերի բաժնի վարիչ | | 140,000 |
| 8. | Մարտիրոսյան Արմեն Աշոտի | գլխավոր հաշվապահ | | 160,000 |
| 9. | Հովհաննիսյան Արամ Ավետիկի | ավագ հաշվապահ | | 120,000 |
| 10. | Մովսեսյան Լուիզա Սուրենի | Հաշվապահ | | 90,000 |
| 11. | Միքայելյան Անահիտ Սուրենի | Հաշվետար | | 90,000 |
| 12. | Շահինյան Վարդան Արսենի | Պահեստապետ | | 89,612 |
| 13. | Հարությունյան Միեր Արտաշեսի | Ֆինանսատնտեսական և գնումների բաժնի վարիչ, էլեկտրոնային շտեմարանի վարման պատ-տու | | 170,000 |
| 14. | Եսայան Գոռ Սպարտակի | ավագ տնտեսագետ | | 115,000 |
| 15. | Հունանյան Հովհաննես Սերյոժայի | Տնտեսագետ | | 100,000 |
| 16. | Փանոսյան Գևորգ Փանոսի | Ֆինանսիստ | | 60,000 |
| 17. | Միրաքյան Ռադա Շահենի | Ֆինանսիստ | | 89,612 |
| 18. | Մկրտչյան Մարինա Յուրիի | գնումների համակարգող | | 40,000 |
| 19. | Կարապետյան Լիլիա Արամի | I մասի տեսուչ | | 89,612 |
| 20. | Քոչարյան Վահան Ռաշիդի | լաբորատորիայի վարիչ, ցանցային համատեղ լաբորատորիաների պատ-տու | ֆ.մ.գ.թ. | 180,000 |
| 21. | Հարությունյան Գագիկ Արամի | լաբորատորիայի վարիչ | ֆ.մ.գ.թ. | 120,000 |
| 22. | Գրիգորյան Լևոն Շավիղի | լաբորատորիայի վարիչ | ֆ.մ.գ.դ. | 120,000 |
| 23. | Չիլինգարյան Ռուբեն Յուրիի | լաբորատորիայի վարիչ | ֆ.մ.գ.թ. | 120,000 |
| 24. | Արամյան Արթուր Ռազմիկի | լաբորատորիայի վարիչ | ֆ.մ.գ.թ. | 120,000 |
| 25. | Նալբանդյան Վաչե Վրեժի | լաբորատորիայի վարիչ | ֆ.մ.գ.թ. | 120,000 |
| 26. | Ալեքսանյան Ալբերտ Գարեգինի | ցանցային համատեղ լաբորատորիաների պատ-տու | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 27. | Մարգարյան Գրիգոր Ռաֆիկի | մասնաճյուղի ղեկավար | | 100,000 |
| 28. | Հովակիմյան Էդուարդ Մինասի | մասնաճյուղի ղեկավար | | 100,000 |
| 29. | Հարությունյան Վահան Սերգեի | գիտական խմբի ղեկավար | | 100,000 |
| 30. | Կոզակ Բելլա Աշոտի | գիտական խմբի ղեկավար | կենս.գ.դ. | 100,000 |
| 31. | Աբրահամյան Ալեքսան Մենեքերիմի | գիտական խմբի ղեկավար, կատարող | ֆ.մ.գ.թ. | 120,000 |
| 32. | Սահրադյան Արտակ Իսրաելի | գիտական խմբի ղեկավար, կատարող | տեխ.գ.դ. | 89,612 |
| 33. | Բաղդասարյան Էդիկ Հրաչիկի | գիտական խմբի ղեկավար, տեխ. անվտանգ. պատ.-տու | | 114,612 |
| 34. | Աղաբեկյան Վիգեն Նվերի | գիտական խմբի ղեկավար, ՔՊ շտաբի պետ | | 130,000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 35. | Թրունի Կարապետ Գրիգորի | առաջատար գիտաշխատող | ֆ.մ.գ.դ. | 90,000 |
| 36. | Խլոպուզյան Սարգիս Հրաչիկի | առաջատար գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 21,448 |
| 37. | Մովսիսյան Արտուր Եղիշի | առաջատար գիտաշխատող | | 122,618 |
| 38. | Պետրոսյան Արամ Մելքումի | առաջատար գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 39. | Սահարյան Արամ Ազատի | առաջատար գիտաշխատող, կատարող | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 40. | Սողոմոնյան Արկադի Իվանի | առաջատար գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 41. | Միրզոյան Վաչագան Ղազարի | ավագ գիտաշխատող | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 42. | Երիցյան Հոմերոս Սուրենի | ավագ գիտաշխատող | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 43. | Խաչատրյան Ժուլվերն Բաղդասարի | ավագ գիտաշխատող | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 44. | Դրմեյան Հենրիկ Ռուբենի | ավագ գիտաշխատող | տեխ.գ.դ. | 89,612 |
| 45. | Մուրադյան Տիգրան Ռաֆայելի | ավագ գիտաշխատող | | 92,618 |
| 46. | Նիկողոսյան Վալերի Ցոլակի | ավագ գիտաշխատող | տեխ.գ.թ. | 89,612 |
| 47. | Ղալեչյան Գեորգի Աշոտի | ավագ գիտաշխատող | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 48. | Բեժանովա Լիանա Սուրենի | ավագ գիտաշխատող | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 49. | Ղազարյան Վահրամ Վաչագանի | ավագ գիտաշխատող | ք.գ.թ. | 92,618 |
| 50. | Խաչվանքյան Դավիթ Կարապետի | ավագ գիտաշխատող | կենս.գ.թ. | 89,612 |
| 51. | Եղիազարյան Արմենակ Մարկոսի | ավագ գիտաշխատող, կատարող | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 52. | Այվազյան Գարեգին Աշոտի | ավագ գիտաշխատող, կատարող | ֆ.մ.գ.թ. | 92,618 |
| 53. | Մարգարյան Վարդան Վլադիմիրի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 22,618 |
| 54. | Սարգսյան Անահիտ Գեղամի | գիտաշխատող | ֆ.մ.գ.դ. | 89,612 |
| 55. | Հունանյան Հովնան Ալբերտի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 56. | Պարազյան Վահրամ Վլադիմիրի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 57. | Միրաքյան Սուրեն Ալեքսանդրի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 92,618 |
| 58. | Մուրադյան Հովհաննես Ռուդիկի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 20,000 |
| 59. | Հովհաննիսյան Մարտիկ Արմենակի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 60. | Սարգսյան Մկրտիչ Հակոբի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 61. | Խալպախչյան Սերգեյ Գավրիլի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 62. | Ափրեյան Ռուբեն Ալբերտի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 63. | Սուքիասյան Ռուզան Պողոսի | գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 64. | Փաշայան Աստուր Ալեքսանդրի | գիտաշխատող | ք.գ.թ. | 89,612 |
| 65. | Ավագյան Արկադի Լևոնի | գիտաշխատող, կատարող | ֆ.մ.գ.թ. | 109,612 |
| 66. | Քոթանջյան Խորեն Վարդազարի | գիտաշխատող, կատարող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 67. | Մկրտչյան Էդգար Արծրունու | գիտաշխատող, կատարող | ֆ.մ.գ.թ. | 92,618 |
| 68. | Հարությունյան Սեյրան Հովսեփի | կրտսեր գիտաշխատող | | 89,612 |
| 69. | Սարգիսյան Վարդան Էդուարդի | կրտսեր գիտաշխատող | | 89,612 |
| 70. | Հովհաննիսյան Մերի Արտաշեսի | կրտսեր գիտաշխատող | | 92,618 |
| 71. | Հարությունյան Հարություն Սերոբի | կրտսեր գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 89,612 |
| 72. | Գրիգորյան Միհեր Լևոնի | կրտսեր գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 92,618 |
| 73. | Գրիգորյան Աշոտ Խաչիկի | կրտսեր գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 92,618 |
| 74. | Սահակյան Քրիստինե Գրիգորի | կրտսեր գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 92,618 |
| 75. | Փափազյան Արթուր Հարությունի | կրտսեր գիտաշխատող | | 92,618 |
| 76. | Շաղյան Էդգար Սարգսի | կրտսեր գիտաշխատող | | 46,309 |
| 77. | Վարդանյան Ջուլետտա Գերասիմի | կրտսեր գիտաշխատող | | 89,612 |
| 78. | Անդրիասյան Արամ Կարենի | կրտսեր գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 20,000 |
| 79. | Տոնոյան Գայանե Սասունի | կրտսեր գիտաշխատող | | 92,618 |
| 80. | Խաչատրյան Տիգրան Սերգեյի | կրտսեր գիտաշխատող | կենս.գ.թ. | 92,618 |
| 81. | Արամյան Կարեն Սարգիսի | կրտսեր գիտաշխատող | ֆ.մ.գ.թ. | 44,806 |
| 82. | Անտոնյան Աննա Պետիկի | կրտսեր գիտաշխատող, հաշվապահ | | 139,612 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 83. | Հարոյան Կարեն Պետիկի | կրտսեր գիտաշխատող, ռադիոակտիվ նյութերի պատ-տու | ֆ.մ.գ.թ. | 92,618 |
| 84. | Մարգարյան Աստղիկ Լորիկի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 85. | Շահվերդյան Արուս Վարուժանի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 86. | Գրիգորյան Սյուզի Մանվելի | ավագ լաբորանտ բ/կ | | 46,309 |
| 87. | Սամսոնյան Հասմիկ Հայկի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 88. | Մխիթարյան Սուզաննա Վարդգեսի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 89. | Սարգսյան Անուշ Վահագնի | ավագ լաբորանտ բ/կ | | 46,309 |
| 90. | Մոսոյան Պետրոս Հովհաննեսի | ավագ լաբորանտ բ/կ | | 20,000 |
| 91. | Պետրոսյան Տիգրան Արայի | ավագ լաբորանտ բ/կ | | 20,000 |
| 92. | Մախտեսյան Ղազարոս Աբրահամի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 93. | Դանոյան Աստղիկ Անդրանիկի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 94. | Ավետիսյան Կաղեն Վոլոդյայի | ավագ լաբորանտ բ/կ | | 89,612 |
| 95. | Հարթենյան Ջուլիետա Գագիկի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 96. | Մանվելյան Մարիամ Ռուբենի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 97. | Հակոբյան Մերի Ալեքսանդրի | ավագ լաբորանտ բ/կ | | 92,618 |
| 98. | Բեգոյան Վահրամ Ֆրունզիկի | ավագ լաբորանտ բ/կ, ՀՀԾՊ | | 114,612 |
| 99. | Վասիլյան Մարիաննա Ստեփանի | ավագ լաբորանտ | | 92,618 |
| 100. | Մելիքյան Եղվարդ Միհրի | ավագ լաբորանտ | | 46,309 |
| 101. | Հայրապետյան Ալեքսանդր Արմենի | ավագ լաբորանտ | | 46,309 |
| 102. | Պապինյան Կարեն Սեյրանի | ավագ լաբորանտ | | 46,309 |
| 103. | Տերյան Հռիփսիմե Կարենի | ավագ լաբորանտ | | 46,309 |
| 104. | Սարգսյան Աստղիկ Վարդանի | ավագ լաբորանտ | | 92,618 |
| 105. | Խաչատրյան Արուսյակ Հովիկի | ավագ լաբորանտ | | 46,309 |
| 106. | Մելքոնյան Արամ Արամի | ավագ լաբորանտ | | 46,309 |
| 107. | Թավաքալյան Մարիամ Էդուարդի | ավագ լաբորանտ | | 46,309 |
| 108. | Հարությունյան Անդրեաս Հարությունի | ավագ լաբորանտ-համարգչային նինտերնետ ցանցիպ-տու | | 92,618 |
| 109. | Ղուկասյան Մետաքսիա Ակսելի | լաբորանտ | | 46,309 |
| 110. | Մարգարյան Հրայր Գրիգորի | լաբորանտ | | 46,309 |
| 111. | Մարգարյան Հայկ Գրիգորի | լաբորանտ | | 46,309 |
| 112. | Սիմոնյան Մանիկա Մարատի | լաբորանտ | | 46,309 |
| 113. | Բեգլարյան Վարդիթեր Գուրգենի | լաբորանտ | | 46,309 |
| 114. | Ուստաբաշյան Կորյուն Գրիգորի | լաբորանտ | | 46,309 |
| 115. | Հարությունյան Հայկ Պարգևի | լաբորանտ | | 46,309 |
| 116. | Մարտիրոսյան Սիրանուշ Դավթի | լաբորանտ | | 92,618 |
| 117. | Հարությունյան Տիգրան Իշխանի | լաբորանտ | | 46,309 |
| 118. | Կիրակոսյան Սաշա Սեդրակի | լաբորանտ | | 46,309 |
| 119. | Մինասյան Լևոն Մելքոնի | լաբորանտ | | 46,309 |
| 120. | Գիգոյան Կարեն Կամոյի | լաբորանտ | | 46,309 |
| 121. | Տիգրանյան Արման Ջիվանի | լաբորանտ | | 46,309 |
| 122. | Թոխմախյան Գնորգ Գուրգենի | առաջատար ճարտարագետ | | 89,612 |
| 123. | Մկրտչյան Հայկանուշ Ժորժիկի | առաջատար ճարտարագետ, արտոնագրային խմբի ղեկավար | | 109,612 |
| 124. | Սրաբյան Անդրեաս Մարտիրոսի | առաջատար ճարտարագետ | | 100,000 |
| 125. | Բաբայան Ինգա Արտյուշի | առաջատար ճարտարագետ | | 89,612 |
| 126. | Պետրոսյան Սարգիս Մազմանի | առաջատար ճարտարագետ-կոնստրուկտոր | | 90,000 |
| 127. | Տեխմիշյան Իվետտա Գուրգենի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 128. | Խաչիկյան Լուսինե Էդուարդի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 129. | Մարկոսյան Ջեմմա Պատվականի | ավագ ճարտարագետ-գրադարանի պատ-տու | | 89,612 |
| 130. | Չախոյան Սեյրան Հարությունի | ավագ ճարտարագետ | տեխ.գ.թ. | 89,612 |
| 131. | Հովհաննիսյան Հեկտոր Թորգոմի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 132. | Մովսեսյան Վարդան Վրեժի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 133. | Եղոյան Վլադիմիր Վահանի | ավագ ճարտարագետ | | 89,612 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 134. | Միքաելյան Տանյա Խաչատուրի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 135. | Ավալյան Նարինե Ռոմենի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 136. | Ասատրյան Գոհարիկ Գարեգինի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 137. | Մոմջյան Մելքոն Մամիկոնի | ավագ ճարտարագետ | | 30,000 |
| 138. | Ազոյան Արամ Օնիկի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 139. | Նալբանդյան Աղավնի Հովհաննեսի | ավագ ճարտարագետ | | 92,618 |
| 140. | Հակոբյան Ալեքսանդր Սերգեյի | ավագ ճարտարագետ | | 89,612 |
| 141. | Ավետիսյան Արմենակ Մերուժանի | ավագ ճարտարագետ | | 90,000 |
| 142. | Մուրադյան Ռուդիկ Գառնիկի | ավագ ճարտարագետ-գազի և ջեռ.համ-րգիսպասարկող | | 89,612 |
| 143. | Մաթևոսյան Սմբատ Ալբերտի | ճարտարագետ | | 89,612 |
| 144. | Սարենց Արմինե Մերուժանի | ճարտարագետ | | 44,806 |
| 145. | Բալայան Կարեն Լևոնի | ճարտարագետ | | 44,806 |
| 146. | Բաղեյան Մարտին Սերյոժայի | ճարտարագետ | | 89,612 |
| 147. | Մկրտչյան Արուս Հենրիկի | ճարտարագետ | | 89,612 |
| 148. | Հովհաննիսյան Ավետիք Արամի | ճարտարագետ | | 46,309 |
| 149. | Մարգարյան Էդվարդ Հրանտի | ճարտարագետ | | 89,612 |
| 150. | Հարությունյան Մանե Արտաշեսի | ճարտարագետ | | 46,309 |
| 151. | Մարտիրոսյան Աշոտ Գեորգիի | ճարտարագետ | | 89,612 |
| 152. | Մելիքսեթյան Աշոտ Աշխարաբեկի | ճարտարագետ | | 89,612 |
| 153. | Ավետիսյան Ավետիս Հրանտիկի | ճարտարագետ | | 92,618 |
| 154. | Մկրտչյան Լուսիկ Աթաբեկի | ճարտարագետ | | 89,612 |
| 155. | Համբարձումյան Անի Մորիսի | ճարտարագետ | | 92,618 |
| 156. | Մելքոնյան Գաբրիել Մելքոնի | ճարտարագետ | | 89,612 |
| 157. | Ռոժնով Իգոր Վասիլևիչ | ճարտարագետ | | 92,618 |
| 158. | Պետրոսյան Նորայր Սերյոժայի | ճարտարագետ | | 89,612 |
| 159. | Քոչարյան Սերժիկ Սերյոժայի | պարետ | | 120,000 |
| 160. | Շահբազյան Ստյոպա Երջոյի | պահնորդային ծառայության պետ | | 120,000 |
| 161. | Համբարձումյան Մորիս Սանասարի | ավտոտնտեսության վարիչ | | 90,000 |
| 162. | Խաչատրյան Վարդգես Գրիգորի | գլխավոր էներգետիկ | | 100,000 |
| 163. | Գասպարյան Աշոտ Մովսեսի | օժանդակտնտեսություններիպատ-տու | | 89,612 |
| 164. | Թոփալյան Գրիգոր Օնիկի | գիտասպասարկման խմբի ղեկավար | | 89,612 |
| 165. | Դանիելյան Արթուր Համլետի | ավագ տեխնիկ | | 44,806 |
| 166. | Հարությունյան Աննա Վլադիմիրի | ավագ տեխնիկ | | 89,612 |
| 167. | Ավետիսյան Արփինե Հրանտիկի | ավագ տեխնիկ | | 92,618 |
| 168. | Գրիգորյան Արտավազդ Ռոբերտի | ավագ տեխնիկ | | 89,612 |
| 169. | Հայրումյան Լուսիկ Վլադիկի | ավագ տեխնիկ | | 89,612 |
| 170. | Վարդանյան Լիանա Սերգեյի | ավագ տեխնիկ | | 89,612 |
| 171. | Վլասյան Վեներա Պողոսի | տեխնիկ | | 44,806 |
| 172. | Ղարիբյան Արամ Գրիգորի | տեխնիկ | | 89,612 |
| 173. | Մովսեսյան Աշոտ Վարդանի | տեխնիկ | | 46,309 |
| 174. | Ադամյան Նարինե Միհերի | տեխնիկ | | 46,309 |
| 175. | Մկրտչյան Հայկ Մանվելի | տեխնիկ | | 44,806 |
| 176. | Փարսադանյան Կարեն Համլետի | տեխնիկ | | 92,618 |
| 177. | Գրիգորյան Նելլի Սերյոժայի | տեխնիկ | | 92,618 |
| 178. | Ահարոնյան Լևոն Համբարձումի | տեխնիկ | | 89,612 |
| 179. | Հակոբյան Սվետլանա Վարազդատի | տեխնիկ | | 89,612 |
| 180. | Փաշայան Արշալույս Ռոբերտի | տեխնիկ | | 89,612 |
| 181. | Ալոյան Հարություն Արշալույսի | ավտոմեխանիկ | | 46,309 |
| 182. | Սողոմոնյան Արայիկ Ալբերտի | վարորդ-մեխանիկ | | 92,618 |
| 183. | Սիմոնյան Ստեփան Գևորգի | էլեկտրիկ | | 89,612 |
| 184. | Կարապետյան Վիգեն Վարանցովի | վերելակի սպասարկող | | 44,806 |
| 185. | Բաղդամյան Պարգև Ներսեսի | փականագործ | | 89,612 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 186. | Հաջաթյան Միրեկան Ֆելիքսի | խառատ | | 46,309 |
| 187. | Ռոժնով Վասիլի Պետրովիչ | ծեփագործ | | 89,612 |
| 188. | Հովակիմյան Ռոզա Գրիգորի | գործավար | | 89,612 |
| 189. | Ճարտարյան Արլինա Արամի | գործավար | | 44,806 |
| 190. | Պապինյան Սյուզաննա Մեյրանի | գործավար | | 92,618 |
| 191. | Հարությունյան Արևհատ Անդրանիկի | հավաքարար | | 89,612 |
| 192. | Հարությունյան Իրա Բաբկենի | հավաքարար | | 89,612 |
| 193. | Աիարոնյան Նաիրա Լենուրայի | հավաքարար | | 89,612 |
| 194. | Բարսեղյան Կարինե Հրաչիկի | հավաքարար | | 89,612 |
| 195. | Ղազարյան Նառա Սամվելի | հավաքարար | | 92,618 |
| 196. | Հովհաննիսյան Կարինե Սուրենի | հավաքարար | | 89,612 |
| 197. | Սարիբեկյան Անիկ Ժորայի | հավաքարար | | 89,612 |
| 198. | Պետրոսյան Ռաֆիկ Թևոսի | տարաբանվոր | | 89,612 |
| 199. | Համբարձումյան Համբարձում Ռազմիկի | տարաբանվոր | | 89,612 |
| 200. | Պետրոսյան Սարգիս Արշակի | տարաբանվոր | | 89,612 |
| 201. | Մանասյան Յուրա Էդիկի | պահնորդ | | 92,618 |
| 202. | Մանուկյան Գրիգոր Աղասու | պահնորդ | | 92,618 |
| 203. | Փայտյան Արթուր Ջավենի | պահնորդ | | 89,612 |
| 204. | Գրիգորյան Սամսոն Կառլենի | պահնորդ | | 89,612 |
| 205. | Մուրադյան Հովիկ Մեխակի | պահնորդ | | 89,612 |
| 206. | Հովհաննիսյան Աղասի Վոլոդյայի | պահնորդ | | 89,612 |
| 207. | Գրիգորյան Միքայել Հայկի | պահնորդ | | 92,618 |
| 208. | Ինանց Մարտիրոս Բորիսի | պահնորդ | | 92,618 |
| 209. | Մանուկյան Աշոտ Մանուկի | պահնորդ, հնոցապան | | 119,612 |
| | | | Ընդամենը | 18,141,972 |

Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)՝ ________________ (Արտակ Մկրտչյան)
(ստորագրություն)(անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմիկառավարման
բաժնիպետ՝ ________________ (Արմինե Մնացականյան)
(ստորագրություն)(անուն ազգանուն)

Կ.Տ.